

կը ձկտէր բնականաբար պետ կամ զլուի ըլլալ այն բոլոր բրիստոնեայ Եկեղեցիներուն, որոնք պարսիկ իշխանութեան տակ էին: Եւ այսպէս կը տեսնենք որ Սելեւկիոյ (Տիգրանի) ասորի պատրիարքը Եհհրալահա (415-420) իր պաշտօնական տրտոսներուն մէջ կը կոչէր ինքզինքը. «Կաթողիկոս Պարսկաստանի, Հայաստանի¹, եւն»: Ասորի պատրիարքներուն այդ ձկտումը լաւ տեսնուած էր նաեւ պարսիկ արքաներէն, և կ'ենթադրեմ որ Բրքիշոյի և Շմուէլի Հայաստան ղրկուելը իբր կաթողիկոս փոխանակ Ս. Սահակի՝ այն ժամանակի փառասէր Գաղիշոյ (Dadišo) ասորի պատրիարքին (421-456) թելադրութեամբ եղած ըլլայ: Բարբրատարար անյաջող անցաւ այդ խաղը, և ի վերջոյ դատարկ մնաց կաթողիկոսական աթոռը, որուն իրապէս տէր և իշխանն էր Ս. Սահակ:

Սակայն սա, յոգնած ու դառնացած մանաւանդ այն ժիտ ու նենգող մեքենայութիւններէն, և ընտրելով աւելի ներքին ու զրական կեանքի պարապել, հայրապետական աթոռին հոգաբարձութիւնը Ս. Մեսրոբի յանձնելով, առանձնացաւ Բագրեւանդի Ս. Յովհաննու ուխտատեղին, աղօթքի, ընթերցումներու և ճգնութեանց նուիրելով ինքզինքը, առանց անխնամ թողլու իր հօտը, որուն կը քարոզէր, կը վարդապետէր, և կը թղթակցէր յոյն և ասորի նշանաւոր եպիսկոպոսներու հետ զանազան կրօնական և վարդապետական խնդիրներու մասին:

* * *

Ս. Սահակ Պարթեի նման լայնախոհ, բեղմնաւոր, անխոնջ ու ձեռներէց հոգւոյ մը գործօնէութիւնը փակել այս կամ այն շրջանին կամ սահմանին մէջ՝ անկարելի է: Ան իր բոլոր կեանքին մէջ գործեց, զրեց, խօսեցաւ՝ ինչ որ պէտք էր, ինչ որ կը թելադրէին իր սուրբ հոգին, իր կորովի միտքը, իր հրավառ սիրտը: Ան՝ ճշմարիտ հայրն էր ազգին, որ երբեք

դադար չունէր, ամէն տեղ էր, մանաւանդ հոն՝ ուր կը պահանջէր կրօնքին ու հայրենիքին պէտքը ու բարիքը, եւս աւելի այնպիսի փոթորկայոյց ժամանակներու մէջ: Թագաւոր, իշխան, եպիսկոպոս, քահանայ, հարուստ կամ աղքատ, բոլորն ալ իրեն կը դիմէին, ոյժ և լոյս խնդրելու իրենց հոգեւոր կամ մարմնաւոր անձկութեանց մէջ: Հարկ չեմ տեսներ խօսիլ հոս իր զրական հոյակապ գործօնէութեան վրայ, որ արեւու պէս փայլուն է, որ մեր Ոսկեղարի հիմը կը կազմէ, և անոր մեծագոյն փառքն ու պարծանքն է: Նոյնպէս աւելորդ կը նկատեմ խօսիլ իր հայրենասիրական ու քաղաքական բազմապիսի արդիւնքներուն վրայ, որոնցմով պիտի կրնար ան՝ աւելի քան մեր թագաւորները իրենց զէնքերով ու զօրութեամբ՝ կանգուն պահել ու փրկել ազգն ու հայրենիքը, եթէ իրեն խորհուրդներուն հետեւէին անոնք՝ որոնց ձեռքն էր պետութեան ղեկը: Հոս կ'ուզեմ քանի մը խօսքով ներկայացնել իր մէկ ուրիշ երկրորդական կամ աննշան կարծուած գործը, որ սակայն կարող պիտի ըլլար յաւերժացնել անոր անունը, եթէ չունենար ուրիշ մեծագոյն գործեր անմահանալու: Պիտի խօսիմ իր Կաեռնք ըսուած համառօտ երկասիրութեան վրայ, որով ուզեց բարեկարգել Հայ եկեղեցւոյ նուիրապետութիւնը՝ որ վերիվայր շրջած ու զրեթէ քայքայուած էր, ուղղել կղերին ու ժողովրդեան մէջ սպրդած անկարգութիւնները, և անով իր ճշմարիտ լոյսին և բարձրութեան մէջ զետեղել քահանայական սրբութիւնը և գերզանցութիւնը, ընծայելով ազգին ըստ ամենայնի օրինակելի և նախանձայոյց եկեղեցակա նութիւն մը, հոյլ մը սուրբ, ազգասէր և իմաստուն անձնաւորութեանց, որոնք մեր Ոսկեղարի պսակը կը կազմեն:

Ինչպէս յիշեցի յօդուածիս սկզբը, այն բոլոր անկարգ և ապօրինի գործերը, որ սկսան Ս. Ներսէսի մահէն վերջ և շա-

1. J. Labourt: «Le christianisme dans l'empire Perse». Paris. 1904, էջ 101. ծան. 3.